taxinfo.am Հարկային տեղեկատվական համակարգ www.taxinfo.am iTax

# Հայաստանի Հանրապետության Կառավարություն
## Որոշում

11 օգոստոսի 2005 թվականի N 1599-Ն

### Երկարացված՝ մինչեւ 35 օր տեւողությամբ (բացառիկ դեպքերում՝ մինչեւ 48 օր տեւողությամբ) ամենամյա արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը հաստատելու մասին

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել երկարացված՝ մինչեւ 35 օր տեւողությամբ (բացառիկ դեպքերում՝ մինչեւ 48 օր տեւողությամբ) ամենամյա արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է 2005 թվականի հունիսի 21-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

Հավելված
ՀՀ կառավարության
2005 թվականի օգոստոսի 11-ի
N 1599-Ն որոշման

### Ցանկ
### Երկարացված՝ մինչեւ 35 օր տեւողությամբ (բացառիկ դեպքերում՝ մինչեւ 48 օր տեւողությամբ) ամենամյա արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների

| NN ը/կ | Կազմակերպությունները | Օրացու-ցային օր | Կազմակերպություններում աշխատողների պաշտոնների անվանումները |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Ուսումնական հաստատություններ, մանկատներ, երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատություններ, երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատություններ, երեխաների խնամքի եւ պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, երեխաների խնամքի ցերեկային հաստատություններ | 35 | ղեկավարներ, նրանց տեղակալներ, ստորաբաժանումների ղեկավարներ |
| 2. | Հանրակրթական ուսումնական հաստատություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, մանկատներ, երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատություններ, երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատություններ, երեխաների խնամքի եւ պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, երեխաների խնամքի ցերեկային հաստատություններ<br><br>Նախադպրոցական ուսումնական հաստատություններ | 48 | դասավանդողներ (ուսուցիչ-դաստիարակներ), հոգեբաններ, արատաբաններ, զինվորական ղեկավարներ (զինղեկներ) եւ երեխաների խնամքի աշխատողներ<br><br>նախադպրոցական դաստիարակության եւ ուսուցման անձնակազմ (դասավանդողներ, երեխաների խնամքի աշխատողներ) |
| 3. | Հանրակրթական հաստատություններ՝ երեխաների լրացուցիչ ուսման համար, արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններ | 35 | դասավանդողներ, մասնագետներ՝ ուսուցման մեթոդիկայի եւ դաստիարակչական աշխատանքների |
| 4. | Միջին եւ նախնական մասնագիտական հաստատություններ (քոլեջ, վարժարան, կրթահամալիր, արհեստագործական ուսումնարան) | 48 | դասավանդողներ, մասնագետներ՝ ուսուցման մեթոդիկայի եւ դաստիարակչական աշխատանքների |
| 5. | Արտադրական հիգիենայի, ճառագայթային | 35 | բժիշկներ, բուժքույրեր, |

| | | | |
|---|---|---|---|
| | հիգիենայի, կոմունալ հիգիենայի բաժանմունքներ եւ բաժիններ | | խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 6. | Համաճարակաբանական, մանրէաբանական, վիրուսաբանական կազմակերպություններ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 7. | Ռենտգենյան, բժշկական ռադիոլոգիական (բոլոր պրոֆիլների) բաժիններ, բաժանմունքներ, կաբինետներ | 48 | բժիշկներ, բժիշկ-ֆիզիկոսներ, ճարտարագետներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 8. | Մաշկավեներաբանական հիվանդանոցներ, բաժանմունքներ, կաբինետներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 9. | Տուբերկուլյոզային եւ հակատուբերկուլյոզային հիվանդանոցներ, դիսպանսերներ, կաբինետներ, առողջարաններ | 48 | բժիշկներ, բուժքույրեր, անձնակազմ միջին բժշկական, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 10. | Հոգեբուժական, հոգենեւրոլոգիական բաժանմունքներ, կաբինետներ | 48 | բժիշկներ, բուժքույրեր, անձնակազմ միջին բժշկական, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 11. | Բարիովիրահատարաններ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 12. | Դատաբժշկական փորձագիտական կազմակերպություններ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 13. | Ախտաբանաանատոմիական կազմակերպություններ, բաժանմունքներ, կաբինետներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 14. | Ֆիզիոթերապեւտիկ բաժանմունքներ, կաբինետներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 15. | Անեսթեզիոլոգիայի եւ վերակենդանացման, ինտենսիվ թերապիայի բաժանմունքներ, հիվանդասենյակներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 16. | Թարախային բարդությունների համար նախատեսված բաժանմունքներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 17. | Լաբորատորիաներ (բաժիններ, բաժանմունքներ, կլինիկական, սերոլոգիական, մանրէաբանական, կենսաքիմիական) | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ, անձնակազմ միջին բժշկական |
| 18. | Քիմիաթերապեւտիկ, լազերային, համակարգչային բաժանմունքներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 19. | Ստորգետնյա առողջապահական կազմակերպություններ, հանքաբուժարաններ, բաժանմունքներ, կաբինետներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 20. | Կենտրոնական նյարդային համակարգի | 35 | բժիշկներ, բուժքույրեր, |

| | | | |
|---|---|---|---|
| | օրգանական ախտահարումներ (անդամալուծություն, կաթված խուլ-համրություն, տեսողական եւ խոսակցական ֆունկցիայի խանգարում) ունեցողների հիվանդանոցներ, բաժանմունքներ | | խնամյալներին անհատական, ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 21. | Հոգեկան եւ տարափոխիկ հիվանդների շտապ եւ անհետաձգելի բուժօգնություն ապահովող բրիգադներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ, սանիտարի պարտականությամբ վարորդներ |
| 22. | Հոգեբուժական (հոգենյարդաբանական) բուժկանխարգելիչ կազմակերպություններ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 23. | Հոգեկան հիվանդների համար գիշերօթիկ տներ, մտավոր թերզարգացած երեխաների համար սոցիալական ապահովության համակարգի գիշերօթիկ տներ | 48 | բժիշկներ, բուժքույրեր, անձնակազմ միջին բժշկական, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 24. | Հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների կանխարգելման կազմակերպություններ, բաժանմունքներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 25. | Սանիտարականխարգելիչ (ինֆեկցիոն օջախներն ախտահանող) կազմակերպություններ, բաժանմունքներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 26. | ՄԻԱՎ-ՁԻԱՀ-ի կազմակերպություններ, հիվանդանոցներ, բաժանմունքներ, լաբորատորիաներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 27. | Տարափոխիկ հիվանդությունների բաժանմունքներ, կաբինետներ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |
| 28. | Նարկոլոգիական կազմակերպություններ | 35 | բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ |